խմբերի ներուժի և կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինար-դասընթացները տվեցին իրենց ցանկալի արդյունքը: Այս տարվա սեպտեմբերից ծրագրին մասնակից «Բոլոր սար», «Առաջընթաց», «Ընտանիք և երեխաներ», «Բնապահպանություն» ՀԿ-ները միասին իրագործում են «Այսօր կերտում ենք ապագան» ծրագիրը՝ ուղղված Վանաձոր համայնքի 14-25 տարեկան պատանիների ու երիտասարդների կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Առաջնորդարանում կայացած «Վանաձոր համայնքի սոցիալական հիմնախնդիրները» թեմայով կլոր սեղան-քննարկումը այս ծրագրի մի մասն էր կազմում, որը հնարավորություն է ընձեռում ՀԿ-ների հետագա համագործակցությանը՝ աջակից ունենալով Եկեղեցուն և պետական կառույցներին:

Որպես համագործակցության արդյունք՝ քննարկման ընթացքում թեմակալ առաջնորդը հանդես եկավ գործնական առաջարկություններով. ուշադրությունից ու խնամքից դուրս մնացած մանուկներին ցուցաբերել նյութական և բարոյահոգեբանական աջակցություն, կազմակերպել նրանց ամառային հանգիստը թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում, աջակցել հաշմանդամներին՝ ձեռք բերելու հաշմանդամության սայլակներ: Գործնական առաջարկությամբ հանդես եկավ նաև մարզպետի խորհրդական Էդիկ Հովսեփյանը:

Հանդիպումը խոստումնալից էր՝ տեղեկատվության փոխանակման, հետագա համագործակցության, առաջիկայում նոր հանդիպումների ու քննարկումների կազմակերպման և համատեղ ծրագրերի իրականացման առումով:

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ 85-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին վանաձորցիների համար ոչ միայն Աստծո տաճար ու աղոթքի տուն է, այլև հոգևոր ու մշակութային օջախ: Եկեղեցու ներքնահարկ սրահում կատարվել են Զատկական ու Համբարձման հանդիսություններ, երիտասարդների հետ հանդիպումներ, բանախոսություններ:

Նոյեմբերի 13-ին Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու երգչախումբը և քաղաքապետարանի կամերային երգչախումբը եկեղեցու ներքնահարկ սրահում կազմակերպել էր համերգ՝ նվիրված երաժշտական արվեստի վառ ու ինքնատիպ կոմպոզիտոր և վիրտուալ դաշնակահար Առնո Բաբաջանյանի 85-ամյա հոբելյանին: Բաբաջանյանի սիմֆոնիաները, դաշնամուրային, վոկալ ու գործիքային ստեղծագործությունները հնչել են աշխարհի տարբեր երկրներում և Հայաստանը հայտնի դարձրել իր երգարվեստով ու մշակույթով: Երգչախմբի (գեղ. ղեկավար՝ Ռ. Մխիթարյան) բարձրարվեստ կատարումները հպարտությամբ ու բերկրանքով լցրեցին երաժշտասեր ունկնդրի հոգին, իսկ «Յորժամ», «Կիրակի», «Առաջին սիրո երգը», «Երգ սիրո մասին», «Նոկտյուրն» և հնչած բազմաթիվ այլ երգերը, շարականներն ու կոմպոզիցիաները ունկնդիրներին ստիպեցին անմիջական մասնակիցը դառնալու ժողովրդականություն վայելող բաբաջանյանական ստեղծագործություններին: Հանդիսությանը ներկա էին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վահան քհն. Ազարյանը, Ստեփան Զորյանի տուն-թանգարանի տնօրեն, բանաստեղծուհի Լ. Անթառանյանը, ուսուցիչներ, աշակերտներ, դասական արվեստի բազմաթիվ երկրպագուներ:

Իր օրհնության և ողջույնի խոսքում Սրբազան Հայրը կոչ արեց տեր կանգնել մեր արվեստին ու մշակույթին՝ ի մասնավորի ասելով. «Խոնարհվում ենք հայ արվեստի առաջ և հպարտանում, որ հայ լավագույն երգահաններից մեկը՝ Առնո Բաբաջանյանը, աշխարհին ներկայացավ ու համաշխարհային ճանաչում ձեռք բերեց իր բարձրարվեստ ստեղծագործություններով»:

Ներկաների հետ իր հույզերն ու ապրումները կիսեց երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ռ. Մխիթարյանը՝ ասելով. «Բազում համերգներ ենք ունենում տարբեր մշակութային օջախներում, սակայն եկեղեցու սրահում այն հնչում է յուրովի, խորհրդավոր: Իսկ թեմակալ առաջնորդ Սեպուհ Սրբազանի քաջալերող խոսքերը միշտ էլ ոգևորել են մեզ, ով ոչ միայն խոսքով, նաև գործով սատար ու օգնական է եղել մեզ բոլոր հարցերում»:

Հայ ազգային ու հոգևոր մշակույթը դարեր շարունակ սնում և սնվում է՝ աշխարհի մշակութային գանձարանում ներկայանալով իր տաղանդաշատ հայորդիներով: Մնում է, որ մենք ևս տեր կանգնենք մեր Հայրենիքին ու Եկեղեցուն, արվեստին ու մշակույթին՝ ապահովելով հային արժանի ընթացքը դարերի քառուղիներում:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊՍ. ՉՈՒԼՋՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 16-19-ը Վանաձորում, Ստեփանավանում, Գուգարքի տարածաշրջանում Երիտասարդության և Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվեցին հանդիպում-սեմինարներ և հանդիսություններ, որոնց մասնակցեցին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հ. Քոչինյանը, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Գ. Խաչատրյանը, պաշտոնատար անձինք:

Երիտասարդության և Ուսանողության միջազգային օրվա առթիվ իր օրհնությունը երիտասարդներին ուղղեց Գերաշնորհ Սրբազան Հայրը ի մասնավորի ասելով. «Լինել հայրենապաշտ և ունենալ բարոյական բարձր նկարագիր, այսօրվա կերտողը և վաղվա տերը լինել մեր ազգային ու հոգևոր մշակույթի: Ահա պատասխանատու ու պատվաբեր մի առաքելություն, որ պիտի ստանձնի այսօրվա երիտասարդը»:

Հանդիպում-սեմինարի ընթացքում Սրբազան Հայրը երիտասարդներին պատմեց Մայր Եկեղեցու ստանձնած դերի ու առաքելության մասին, ներկայացրեց Գուգարաց թեմի պատմությունը և ապա կոչ արեց շարունակել զորավիգ լինել Եկեղեցուն և համատեղ ուժերով մեր հայրենակիցներին ետ պահել ազգակործան ու ազգը ջլատող աղանդներից: Ապա նրանց բաժանեց «Քրիստոնեական» ուղեցույց-գրքույկը:

ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Նոյեմբերի 22-ին կայացավ Վանաձոր համայնքի Ավագանու նիստ, ուր միաձայն ընդունվեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և Լոռու մարզպետ Հ. Քոչինյանի առաջարկը՝ մարզի մանկական կրթօջախներն անվանել համաքրիս-